

**ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐԸ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՏԵՐՄԻՆԱԶԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հայերենը բոլոր ժամանակներում էլ փոխառություններ կատարել է ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված ձևով: Ըստ հետազոտողների՝ փոխառությունները կատարվել են փոքրասիական կենդանի և մեռած լեզուներից, պարսկերենից ու հունարենից, կովկասյան լեզուներից, արաբերենից, մոնղոլ-թաթարական ու թուրքական, միջերկրական ու եվրոպական լեզուներից, ինչպես նաև ռուսերենից: Փոխառությունները կատարվել են ոչ միայն առօրյա - կենցաղային շփումների, այլև առևտրի և արհեստների միջոցով, որոնց մի մասը հետագայում վերածվել է տերմինների:¹

Փոխառությունը երկու լեզուների շփման հետևանքով լեզվական տարրերի (բառերի, ոճերի, դարձվածքների, քերականական իրողությունների, ածանցների և հնչյունների) անցումն է մի լեզվից մյուսը: Փոխառությունը կատարվում է նոր հասկացություններ, իմաստներ անվանելու կամ եղածների տարբեր անցումներն արտահայտելու համար:² Տերմինաբանության՝ իբրև բառապաշարի մի մասնաշերտի զարգացումը կատարվում է արտաքին և ներքին գործոններով, տերմինաբանությունը ևս հարստանում է արտաքին և ներքին ուղիներով (արտաքին և ներքին աղբյուրներից):

1. Տերմինաբանության զարգացման արտաքին գործոններ են գիտության անընդհատ զարգացումը, հասարակական կյանքի փոփոխությունները և մարդկային գործունեության առաջընթացը: Ներքին գործոններն են տերմինների կատարելագործման, տերմինահամակարգերի միօրինականացման և կանոնակարգման գործընթացները:

2. Ժողովուրդների միջլեզվական շփումներով է պայմանավորված տերմինաբանության արտաքին ուղիով զարգացումը, երբ մի լեզու հարստացնում է հասկացությունների և իմաստների իր շտեմարանը՝ համալրելով այն ուրիշ ժողովուրդների ձեռքբերումներով:

3. Տերմինաբանության զարգացման արտաքին աղբյուրը *փոխառություններն ու պատճենումներն* են: Ներքին աղբյուրները ներքին փոխառություններն են, որոնք կատարվում են՝ ա/ լեզվի զարգացման տարբեր փուլերից և վիճակ-

¹ Հ. Զ. Պետրոսյան, Տերմինագիտության հիմունքներ, Ե. 2010, էջ 144 - 145:

² Հմմտ. Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե. 1987, էջ 613:

ներից /գրաբարից, միջին հայերենից, արևմտահայերենից/, ք/ գիտության մի բնագավառի տերմինաբանությունից մյուսը:³

Սույն հոդվածի շրջանակներում մենք կանգ կառնենք հոգեբանական տերմինների զարգացման արտաքին աղբյուրների վրա և քննության առարկա կդարձնենք հայերենի հոգեբանության տերմինահամակարգում գործառվող այն տերմինները, որոնք փոխառություն են օտար լեզուներից՝ միջնորդավորված կամ անմիջական ուղիներով: Անշուշտ, դժվար է հստակ տարբերակել այդ տերմինների անմիջական կամ միջնորդավորված փոխառյալ շերտերը, սակայն կարելի է ընդհանուր առմամբ ցույց տալ դրանց ծագման աղբյուրը՝ փոխատու լեզուն: Վերոբերյալ շերտերը տարբերակելու համար յուրաքանչյուր տերմինի նկատմամբ պետք է կատարել իմաստագործառական և ժամանակագրական գործոնի յուրահատուկ քննություն, այսինքն՝ հայերենում տվյալ տերմինի գործածության ժամանակագրական գործոնի բացահայտում, որ դուրս է մեր քննության շրջանակներից: Ըստ այդմ՝ ինչպես նշեցինք, մենք կբավարարվենք փոխառյալ տերմինների մայր լեզուն ցույց տալով:

Հոգեբանական գիտության տերմինահամակարգում մեծ տեղ են զբաղում ինչպես փոխառությունները, այնպես էլ պատճենումները: Սակայն մինչ փոխառություններին և պատճենումներին անցնելը, նշենք այն հոգեբանական տերմինները, որոնք ծագումով բնիկ հայկական բառեր են և այնքան էլ մեծ թիվ չեն կազմում: Բնիկ են համարվում հայոց լեզվի այն բառերը, որոնք կազմում են նախնական՝ հնդեվրոպական բառապաշարը կամ կերտվել են հետագայում հայերենի բառապաշարի հիման վրա: Դրանք հնդեվրոպական ծագում ունեցող արմատական բառերն են, որոնք գրաբարից, միջին հայերենից և հայ բարբառներից փոխանցվել են ժամանակակից հայերենին, և լեզվի զարգացման հին և նոր շրջաններում այդ բառարմատներով կազմված բաղադրությունները:⁴

Հոգեբանական տերմինահամակարգում հանդիպել են ծագումով բնիկ հետևյալ հայկական բառերը՝ անձ, հոգի, լեզու, խանդ, նյարդ, ծախլիկ, սուտ, սեր, սեռ, տագնապ, քուռ, ուսում, փորձ, ես և այլն:⁵

Փոխառությունը՝ իբրև հայերեն տերմինաբանության զարգացման և հարստացման ուղի, գիտության տարբեր բնագավառների տերմինաբանության մեջ տարբեր չափ ու կշիռ ունի: Այս առումով հոգեբանական տերմինների շարքում մեծ տեղ են զբաղեցնում փոխառություններն ու պատճենումները: Քանի որ հոգեբանությունը որպես գիտություն սկզբնավորվել է Հին Հունաստանում /

³ Զ. Յ. Պետրոսյան, նշված աշխատություն, էջ 146-149:

⁴ Ա. Մ. Սուքիասյան, ժամանակակից հայոց լեզու, Ե. 1999, էջ 183-187:

⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ. I-IV, Ե. 1971-1979:

հոգեբանության վերաբերյալ առաջին աշխատությունը գրվել է Հին Հունաստանում՝ «Հոգու մասին», Արիստոտել/, ուստի հոգեբանական շատ տերմիններ հունարեն են և աշխարհի շատ լեզուների անցել են հունարենից՝ ուղղակի /անմիջական/ կամ միջնորդավորված փոխառությունների ճանապարհով: Դրանց մեծ մասը հենց այդպես էլ մնացել են փոխառյալ բառերի տեսքով, սակայն շատերը թարգմանվել են և ունեն հայերեն համարժեքները: Առաջացած նոր տերմինները տարբեր լեզուներում վերափոխվել են տվյալ լեզվին համապատասխան ձևերով՝ ենթարկվելով տվյալ լեզվի բառակազմական օրենքներին և հնչյունական համակարգին, հաճախ էլ ուղղակի թարգմանվել են:

Ստորև վկայվող հոգեբանական փոխառյալ տերմինները ներկայացնում ենք ըստ ծագման աղբյուրի.

1. Հունական փոխառություններ՝

աբուլիա - հուն.՝ abulis - անվճռականություն,
 ագրաֆիա - հուն.՝ a-ժխտող մասնիկ, grāphō - գրում եմ,
 ամենեզիա - հուն.՝ a - ժխտական մասնիկ և mnē - հիշողություն,
 անալիզ - հուն.՝ ánalýsis - մասնատում, տրոհում,
 անալոգիա - հուն.՝ ánalōgia - համապատասխանություն, նմանություն,
 անամնեզ - հուն.՝ anamnesis - հուշ,
 անտրոպոմորֆիզմ - հուն.՝ ánthrōpos - մարդ, morphē - տեսք, կերպ,
 աստենիա - հուն.՝ astheneia - թուլություն, ուժազրկություն,
 աֆազիա - հուն.՝ aphasia, a - ժխտող մասնիկ, phasis - ասույթ,
 դիդակտիկա - հուն.՝ didaktikos - խրատող, ուսուցանող,
 եվգենիկա - հուն.՝ eugenēs - բարեծնունդ, ազնվածին,
 էթիկա - հուն.՝ ēthiká, ēthikos-բարոյականին վերաբերող, ethos- բարք, սովորույթ,
 էյֆորիա - հուն.՝ euphoria - հաճելի վիճակ,
 էմպաթիա - հուն.՝ empathēia- ապրումակցում,
 էմպիրիզմ - հուն.՝ empeiria- փորձ,
 էվրիստիկա - հուն.՝ heuriskō- որոնում եմ, գտնում եմ,
 իդեա - հուն.՝ idea- պատկեր, հասկացություն, գաղափար, նախատիպ,
 խոլերիկ - հուն.՝ cholē- մաղձ, լեղի,
 կալիգրաֆիա - հուն.՝ kalligraphia - գեղեցիկ ձեռագիր, kallos - գեղեցկություն և grapho - գրում եմ,
 կատեգորիա - հուն.՝ katēgoria - ասույթ, մեղադրանք, հատկանիշ,
 կինոֆորիա - հուն.՝ kynos - շուն և phobia - վախ, սարսափ,
 հիպնոս - հուն.՝ hypnos - քուն,
 հիպոֆիզ - հուն.՝ hypophysis- ելուստ,
 մեթոդ - հուն.՝ méthodos - իմացության ուղի, տեսություն, ուսմունք,
 մելոմանիա - հուն.՝ melos - երգ, մեղեդի, mania - խելագարություն, ուսմունք,

միմիկա - հուն.՝ *mimikós* — ընդօրինակող,
 շիզոֆրենիա-հուն.՝ *schizo*—տրոհում եմ և *phren*—խելք, հոգի, բանականություն,
 սինթեզ - հուն.՝ *synthesis* - միավորում, զուգորդում,
 տիպ - հուն.՝ *týpos* —դրոշմ, ծև, նմուշ,
 ֆանտազիա - հուն.՝ *phantasia* - երևակայություն,
 ֆոբիա - հուն.՝ *phóbos* — վախ, սարսափ:

2. Լատինական փոխառություններ՝
 արևստրակցիա - լատ.՝ *abstratio* - վերացարկում, հեռացում,
 ագրեսիա - լատ.՝ *agressio* - հարձակում,
 ագլյուտինացիա - լատ.՝ *agglutinatio* - կպցնել, սոսնձել,
 ադապտացիա - լատ.՝ *adaptare* - հարմարեցնել,
 ադեկվատ - լատ.՝ *adaequatus* - հավասարեցված,
 անիմիզմ - լատ.՝ *anima* - ոգի, հոգի,
 ապերցեպցիա - լատ.՝ *ap* - դեպի, *perception* - ընկալում,
 ասոցացիա - լատ.՝ *associatio* - միավորում,
 ավտորիտարիզմ - լատ.՝ *auctoritas* - իշխանություն, ազդեցություն,
 ատրիբուտ - լատ.՝ *attribuo* - տալիս եմ, օժտում եմ, վերագրում եմ,
 աֆեկտ - լատ.՝ *affectus* - հոգեկան խռովք, կիրք,
 դեդուկցիա - լատ.՝ *deductio* - հանում, ստացում,
 դեպրեսիա - լատ.՝ *depressio* - ճնշում,
 դոմինանտ - լատ.՝ *dominantis* - տիրապետող,
 էգոիզմ - լատ.՝ *ego* - ես,
 էվոլյուցիա - լատ.՝ *evolutio* - ծավալում,
 էքսպերիմենտ - լատ.՝ *experimentum* - փորձ, փորձարկում,
 էքսպրեսիա - լատ.՝ *expressio* - արտահայտում, դրսևորում,
 իմիտացիա - լատ.՝ *imitatio* - ընդօրինակում,
 ինդուկցիա - լատ.՝ *induktio* - վրան բերելը, նշան բռնելը,
 ինտելեկտ - լատ.՝ *intellectus* - իմացություն,
 ինտուիցիա - լատ.՝ *intuitio* - ուշադրություն, սևեռում կերպով նայում եմ,
 լատենտ - լատ.՝ *latens* - թաքուն, անտեսանելի,
 լիբիդո - լատ.՝ *libido* - հակում, ցանկություն, կիրք,
 կոմպլեքս - լատ.՝ *complexus* - կապ, զուգորդում,
 տակտ - լատ.՝ *tactus* - հպում, շոշափում, զգացում,
 տեմպ - լատ.՝ *tempus* - ժամանակ,
 օբյեկտ - լատ.՝ *objectum* - առարկա,
 ֆունկցիա - լատ.՝ *functio* - կատարում, իրագործում:

3. Ֆրանսերենից կատարված փոխառություններ՝
 ակալկուլիա - *a* - ժխտական մասնիկ, ֆր.՝ *calculer* - հաշվել,

անկետա - ֆր.՝ enquête - հետաքննություն,
 էմոցիա - ֆր.՝ émotion - ցնցում եմ, հուզում եմ,
 էտալոններ - ֆր.՝ étalon - մոլշ, էտալոն,
 էտիկետ - ֆր.՝ etiquette - վարվելակերպ, վարքածև,
 էքստերիորիզացիա - ֆր.՝ extériorization - դրսի, արտաքին,
 ժեստ - ֆր.՝ geste - գործ, քաջագործություն,
 իդեալ - ֆր.՝ idéal - նախատիպ, գաղափար,
 իմպրովիզացիա - ֆր.՝ improvisation - հանկարծակի, անսպասելի,
 ինդիվիդուալիզմ - ֆր.՝ individualisme - անբաժանելի,
 ինտերիորիզացիա - ֆր.՝ interiorisation - ներքին, ներքնայնացում,
 կրետինիզմ - ֆր.՝ crétin - ապուշ, տկարամիտ, թուլամիտ,
 մանիպուլյացիա - ֆր.՝ manipulation - ձեռնածություն,
 ռեժիմ - ֆր.՝ régime - կառավարում,
 տրանս - ֆր.՝ transe, transir - թմրել, անզգայանալ, քարանալ:

4. Անգլերենից կատարված փոխառություններ՝
 բիհեվիորիզմ - անգլ.՝ behaviour - վարք,
 թեստ - անգլ.՝ test - փորձ, փորձարկում,
 իմպրինտինգ - անգլ.՝ imprinting - տպավորում,
 ինսայտ - անգլ.՝ insight - մտքի փայլատակում,
 լիդեր - անգլ.՝ leader - ղեկավար, առաջատար անձ,
 ստրես - անգլ.՝ stress - լարվածություն, ճնշում,
 տրենաժոր - անգլ.՝ train - մարզել, սովորեցնել:

5. Ռուսերենից կատարված փոխառություններ.

Մի շարք օտար հոգեբանական եզրույթներ հայերենին անցել են ռուսերենի միջոցով: Ղրանք դիտվում են միջնորդավորված փոխառություններ, որոնց մեջ կան հունական, լատինական, արաբական և այլ լեզուների պատկանող բառեր: Հմնտ.

ազարտ - азарт - մոլեգնություն,
 ալգորիթմ - алгоритм - որևէ խնդրի լուծման ընթացքի բոլոր քայլերի հաջորդական նկարագրությունը,
 ալկոհոլիզմ - алкоголизм - գինեմոլություն,
 ակտուալիզացիա - актуализация - որևէ հոգեկան բովանդակության, դիրքորոշման անցումը,
 ասեմիա - асемия - նկարելու ընդունակության խանգարումը,
 բիոմեխանիկա - биомеханика - գիտություն, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմի, հատկապես մարդու շարժումների մեխանիզմները, կառավարումը,
 մատերիա - материя - փիլիսոփայական կատեգորիա,

նարցիզմ – нарцизм - մարդու հատուկ բարոյահոգեբանական դիրքորոշում,
երբ նա միայն իրեն է սիրո արժանի համարում,
ռապորտ – рапорт - հիպնոլոգի և հիպնոսացվողի յուրահատուկ
հոգեբանական կապը հիպնոսացման պրոցեսում,
ռեակցիա – реакция - հակազդում,

օպերատոր – оператор - ինժեներական հոգեբանության բնագավառում
այդպես են անվանում այն մարդուն, որն իր գործունեությունը կատարում է
«մարդ - մեքենա» համակարգի կազմում:

Հանդիպում է նաև իտալերենից փոխառյալ հոգեբանական տերմին՝
կարիերա – իտալ.՝ carriera – վազք, կյանքի ուղի⁶:

Ինչպես յուրաքանչյուր գիտության տերմինահամակարգում, հոգեբանու-
թյան մեջ ևս տերմինները փոխառվել են լիակատար կամ մասնակի ծներով:
Լիակատար փոխառության դեպքերում վերցվում է ամբողջությամբ օտար
տերմինը: Վերոհիշյալ հոգեբանական տերմիններից լիակատար փոխառու-
թյուններ են՝ ֆանտազիա - phantasia, կատեգորիա - kategoria, անալոգիա -
analogia, իդեալ – ideal, թեստ – test, ալգորիթմ – алгоритм, մատերիա - материя,
ռեակցիա – реакция, ասեմիա - асемия և այլն:

Մասնակի փոխառյալ հոգեբանական տերմինները կազմվել են օտար մաս-
նիկի /արմատի/ և հայերեն արմատի, ածանցի համադրմամբ, այսպես օրինակ՝
ամբիվալենտություն - լատ.՝ ambo և valentia + ություն, էքսպանսիվություն –
լատ.՝ expansion + ություն, ինտեգրալային – լատ.՝ integer + ային,
ագրեսիվություն – լատ.՝ aggressio + ություն, ավտոմատացում – հուն.՝ automatos
+ աց + ում, իդեալականացում – ֆր.՝ ideal + ական + աց + ում, ակտիվություն –
լատ.՝ актив + ություն և այլն⁷:

Պատճենումները հոգեբանական տերմինահամակարգում

Փոխառությունների տեսության մեջ պատճենումը լեզվական այն երևույթն
է, երբ այլ լեզվի միավորի կազմության կաղապարով և ընդօրինակումով,
սակայն սեփական լեզվանյութով ստեղծվում է լեզվական նոր միավոր՝
պատճեն:⁸ Պատճենումները հայերեն այն բառերն են, որոնք կազմվում են
օտարազգի բառերի իմաստների թարգմանությամբ կամ նրանց կառուցվածքի
նմանողությամբ: Հոգեբանության տերմինահամակարգում ևս մեծ տեղ են
գրավում պատճենումները: Ստորև ներկայացնում ենք օրինակները համապա-
տասխան դասակարգումներով.

⁶ Ա. Ա. Նալչաջյան, Հոգեբանական բառարան, Ե. 1984:

⁷ Գ. Յ. Պետրոսյան, Տերմինաֆիտության հիմունքներ, էջ 144-154:

⁸ Նույն տեղում, էջ 155-160:

1. Իմաստային պատճենումներ, երբ լեզուն բառը փոխ է առնում միայն օտարազգի բառի իմաստը՝ պահպանելով իր հնչյունական կազմն ու բառաքերականական բնիկ կառուցվածքը, այսպես օրինակ՝ трудолюбие - աշխատասիրություն, успеваемость - առաջադիմություն, вытеснение - արտամղում, характер - բնավորություն, эксперимент - գիտափորձ, действие - գործողություն, коварство - խարդախություն, ум - խելք, совесть - խիղճ, задача - խնդիր, паника - խուճապ, воля - կամք, заикание - կակազություն, сравнение - համեմատություն, скромность - համեստություն և այլն:

2. Կառուցվածքային կամ բառակազմական պատճենումներ, որոնք կազմվում են օտար բառերի կամ արտահայտությունների իմաստային մասերի՝ բաղադրիչների բարձրանությամբ, օրինակ՝ нерешительность - անվճռականություն, безразличие - անտարբերություն, самонаблюдение - ինքնադիտում, самоуважение - ինքնահարգանք, самовнушение - ինքնաներշնչում և այլն: Հոգեբանական տերմինների շարքում բավականին շատ են նաև տերմինային կապակցությամբ կառուցվածքային պատճենումները, ինչպես՝ "Чувство шестое" - «Ձգայություն վեցերորդ», слуховая память - լսողական հիշողություն, ролевая игра - դերային խաղ, групповые способности - խմբային ընդունակություններ, общественное сознание - հասարակական գիտակցություն, продуктивное мышление - արդյունավետ մտածողություն և այլն:

3. Կիսապատճենումներ: Կիսապատճենումները կառուցվածքով նույնպես համապատասխանում են սկզբնաղբյուրին, սակայն կազմված են սեփական լեզվի և փոխառյալ բաղադրիչներով,⁹ ինչպես օրինակ՝ հիպերընդունակություններ, հոգեֆիզիոլոգիա, ներդրողություն: Համոզիպում են նաև տերմինային կապակցությամբ կիսապատճենումներ՝ սոցիալական իրադրություն, պրոբլեմային իրավիճակ, կինեսթետիկ զգայություններ, կողմնորոշման ռեֆլեքս, չառաջադիմելու սինդրոմ և այլն:¹⁰

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենի հոգեբանական տերմինահամակարգում մեծ տեղ են զբաղեցնում փոխառյալ տերմինները: Դրանք փոխառություններ են հիմնականում հունարենից, լատիներենից, ինչպես նաև՝ ֆրանսերենից, անգլերենից և ռուսերենից: Վերջիններս հանդես են գալիս լիակատար և մասնակի դրսևորումներով:

Որպես փոխառության առանձին տարատեսակ հոգեբանական տերմինների շարքում զգալի կշիռ ունեն նաև պատճենումները՝ իմաստային և կառուցվածքային դրսևորումներով:

⁹ Ա. Մ. Սուբխայան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 209-212:

¹⁰ Ա. Ա. Նալչաջյան, Հոգեբանական բառարան: